

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ՀԱՅՑԱՑԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

ԴԱՎԻԹ ՄԵԼՔՈՆՅԱՆ , ԱՐՄԵՆ ԹԱՎԱԴՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հոդվածը նվիրված է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» վարույթով հայցային վաղեմության կիրառման դատական պրակտիկայի ուսումնասիրությանը: ՀՀ գլխավոր դատախազության համար դարձել է պրակտիկա հայցադիմում ներկայացնել օրենքով սահմանված երեք տարիների ընթացքում, հետո դատարան ներկայացնել հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդություն: Ընդ որում, հաճախ այդպիսի միջնորդությունները ներկայացվում են ուսումնասիրությունը սկսելուց հետո՝ երեք տարի անց, սակայն դատարանները մերժում են հայցային վաղեմություն կիրառելու մասին պատասխանողների միջնորդությունը՝ հղում անելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերաբերելի կարգավորումներին:

Հեղինակները հոդվածում հիմնավորում են, որ հայցային վաղեմության ժամկետների նման մեկնաբանությունը հակասում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքում առկա առանձին իրավակարգավորումների: Բացի այդ, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 8-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ, 170-րդ և 340-րդ հոդվածներին ապօրինի գույքի բռնագանձման վարույթների շրջանակներում դատարանների կողմից տրվող մեկնաբանությունը Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից ևս խոցելի է և ենթակա է վերանայման:

* **Դավիթ Մելքոնյան** – իրավագիտության թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Давит Мелконян – кандидат юридических наук, доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

Davit Melkonyan – Candidate of Legal Sciences, Associate professor at YSU Chair of Criminal Procedure and Criminalistics

Էլ. փոստ՝ melkd@yahoo.com <https://orcid.org/0000-0001-9993-6404>

Արսեն Թավադյան – իրավագիտության թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ

Арсен Тавадян – кандидат юридических наук, доцент кафедры гражданского права ЕГУ

Candidate of Legal Sciences, Associate professor at YSU Chair of Civil Law

Էլ. փոստ՝ arsentavadyan@gmail.com <https://orcid.org/0000-0002-5074-0408>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 20.02.2025

Գրախոսվել է՝ 16.06.2025

Հաստատվել է՝ 25.06.2025

© The Author(s) 2025

Բանալի բառեր – *հայցային վաղեմություն, հայցի հիմքի և առարկայի փոփոխություն, ապօրինի ծագում ունեցող գույք, Քաղաքացիական դատավարության օրենսգիրք*

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ «Օրենք») ընդունումը վերջին շրջանի կարևոր իրավական իրադարձություններից է: Թեև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով կայացվել են ընդամենը մեկ-երկու վերջնական դատական ակտեր, այնուամենայնիվ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ հակակոռուպցիոն քաղաքացիական դատարանն այս վարույթներով առանձին քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական ինստիտուտներին տալիս է յուրօրինակ մեկնաբանություններ, որոնք չեն բխում այդ ինստիտուտների իմաստից:

Նման ինստիտուտներից է հայցային վաղեմությունը: Ըստ Օրենքի 8-րդ հոդվածի՝ *«1. Ուսումնասիրությունը կարող է տևել առավելագույնը երեք տարի: 2. Սույն հոդվածով նախատեսված ժամկետների խախտմամբ ներկայացված հայցը համարվում է ներկայացված հայցային վաղեմության ժամկետի բացթողումով»:*

ՀՀ գլխավոր դատախազության համար դարձել է պրակտիկա հայցադիմում ներկայացնել այս երեք տարիների ընթացքում, հետո դատարան ներկայացնել հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդություն¹: Ընդ որում, հաճախ այդպիսի միջնորդությունները ներկայացվում են ուսումնասիրությունը սկսելուց հետո՝ երեք տարի անց:

Նման իրավիճակներում պատասխանողները ներկայացնում են հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություններ այն հիմնավորմամբ, որ հայցի հիմքը և առարկան փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը ըստ էության նոր հայց է, և հայցային վաղեմության ժամկետը պետք է հաշվարկվի միջնորդության ներկայացման պահի հաշվառմամբ, իսկ սահմանված կարգով հայցը հարուցելու հիմքով հայցային վաղեմության ժամկետն ընդհատելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի կանոնը նման պայմաններում կիրառելի չէ:

¹ Բերենք բազմաթիվ նմանատիպ գործերից ընդամենը մի քանի օրինակ՝

1. Թիվ ՀԿԴ/0001/02/22 քաղաքացիական գործով հայցադիմումը ներկայացվել է 31.08.2022թ., 28.12.2022թ. թույլատրվել է հայցի առարկայի փոփոխությունը:
2. Թիվ ՀԿԴ/0002/02/22 քաղաքացիական գործով հայցադիմումը ներկայացվել է 02.09.2022թ., իսկ 17.01.2023թ. թույլատրվել է հայցի առարկայի փոփոխությունը:
3. Թիվ ՀԿԴ/0003/02/22 քաղաքացիական գործով հայցադիմումը ներկայացվել է 05.09.2022թ., իսկ 23.02.2023թ. որոշմամբ թույլատրվել է հայցի առարկայի փոփոխությունը:
4. Թիվ ՀԿԴ/0005/02/22 քաղաքացիական գործով հայցադիմումը ներկայացվել է 08.09.2022թ., իսկ 18.01.2023թ. թույլատրվել է հայցի առարկայի փոփոխությունը:
5. Թիվ ՀԿԴ/0006/02/22 քաղաքացիական գործով հայցադիմումը ներկայացվել է 15.09.2022թ., իսկ 20.01.2023թ. թույլատրվել է հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանը հակված է մերժելու նման միջնորդությունները: Այսպես, թիվ ՀԿԴ/0219/02/23 գործով 27.12.2024 թ. որոշման մեջ դատարանը նշել է. «Տվյալ դեպքում, հայցի հիմքի և առարկայի փոփոխության արդյունքում ավելացել են սկզբնական հայցով չպահանջված գույքերի բռնագանձման պահանջներ (խնդրամասի 12-19-րդ կետերը), ինչպես նաև ավելացվել է երկու գումարային պահանջների չափը (խնդրամասի 20-21-րդ կետերը): Դատարանն արձանագրում է, որ 05.08.2024 թվականին և 31.10.2024 թվականին ներկայացված հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին միջնորդությունները պայմանավորված են եղել ինչպես նախկինում ստացված տվյալների վերանայմամբ, այնպես էլ պատասխանողների ներկայացուցիչների կողմից տրամադրված փաստաթղթերի համադրմամբ կատարված վերահաշվարկով: Այսինքն՝ տվյալ պարագայում Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ամփոփագրի կազմումից հետո Իրավասու մարմնի կողմից չեն կատարվել այնպիսի գործողություններ (հակառակի մասին որևէ փաստարկ չի ներկայացվել), որոնք ենթակա են կատարման միայն Ուսումնասիրության շրջանակներում, և նման պայմաններում Օրենքի 8-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել այնպես, որ հայցվորի կողմից իրենից չկախված հանգամանքների արդյունքում իր դատավարական իրավունքից օգտվելը հիմք հանդիսանա հայցային վաղեմություն կիրառելու համար:

Վերոշարադրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների լույսի ներքո Դատարանը գտնում է, որ Հայցվորի միջնորդությամբ կատարված հայցի փոփոխությունը չի կարող գնահատվել որպես «նոր հայցի ներկայացում», քանի որ դրա արդյունքում այն շահը, որի պաշտպանության համար հարուցվել է սկզբնական հայցը, չի փոխվել, նյութաիրավական պահանջը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, ևս մնացել է նույնը, ինչպես նաև փոփոխված պահանջը ներկայացվել է այն պատասխանողների գույքի առնչությամբ, ովքեր սկզբնական հայցով արդեն իսկ պատասխանող էին հանդիսանում: Նշված հանգամանքները հիմք են տալիս Դատարանին եզրակացնելու, որ Իրավասու մարմնի կողմից Ուսումնասիրության եռամյա ժամկետում կատարման ենթակա գործողություններ այդ ժամկետի ավարտից հետո չեն կատարվել, այսինքն ինքնին հայցադիմումը ներկայացվել է հայցային վաղեմության ժամկետի ընթացքում, իսկ օրենքով սահմանված կարգով և թույլատրված ձևով հայցի շտկումը (հայցի հիմքի և առարկայի լրացումը) չի կարող գնահատվել որպես նոր հայցի ներկայացում, և ըստ այդմ դրա նկատմամբ չի կարող հաշվարկվել Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված հայցային վաղեմության ժամկետը»:

Թիվ ՀԿԴ/0198/02/23 գործով 03.07.2024 թ. որոշման մեջ դատարանը նշել է. «Դատարանն արձանագրում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում նոր պահանջը ենթադրում է ապօրինի

ծագում ունեցող և բռնագանձման ենթակա գույքերի կազմի ընդլայնում, մինչդեռ սույն դեպքում հայցվորը, ելնելով իրեն վերապահված տնօրինչականության սկզբունքից, առանց ներկայացված փաստական ելակետերի փոփոխության ներկայացրել է գույքերի ամբողջ ծավալով բռնագանձման պահանջ՝ անկախ գույքի այս կամ այն տոկոսը ապօրինի դիտարկելուց: Դատարանն արձանագրում է, որ պահանջի ձևակերպումը նշված ձևով բխում է Բրավասու մարմնի մոտեցումից և մարտավարությունից: Սրա հիմքում ընկած է այն գաղափարը, որ օրենսդիրը որևէ կերպ չի կանխորոշել Բրավասու մարմնի կողմից կատարվող հաշվարկի սկզբունքներն ու կանոնները, իսկ Դատարանն իր հերթին նս սահմանափակված չէ հաշվարկի որևէ եղանակ ընտրելու հարցում: Ուստի նույն ելակետային տվյալների կիրառմամբ տարբեր եղանակներով հաշվարկի իրականացումը (օրական, տարեկան) կարող է հանգեցնել տարբեր ցուցանիշների ստացմանը: Այս առումով Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հետագայում գույքի ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող բաժինը որոշելու է Դատարանը՝ կաշկանդված չլինելով կողմերի կողմից ներկայացված հաշվարկի տրամաբանությամբ:

Անդրադառնալով հայցի առարկայի փոփոխությամբ դրամական պահանջի չափի ավելացմանը՝ Դատարանն արձանագրում է, որ դրամական պահանջը ավելացված չափի մասով չի կարող դիտարկվել որպես նոր պահանջ՝ հաշվի առնելով, որ Բրավասու մարմնի կողմից նշված պահանջը սկզբնապես նս ներկայացված է եղել, իսկ չափի փոփոխությունը սույն դեպքում պայմանավորված է Բրավասու մարմնի կողմից կատարված վերահաշվարկով: Այսինքն՝ Դատարանը արձանագրում է, որ հայցվորը ոչ թե նոր ապօրինի ծագում ունեցող գույքի (դրամական միջոցների) պահանջ է ներկայացրել, այլ ներկայացված պահանջում կատարել է գույքային կազմերի փոփոխություն»:

Թիվ ՀԿԴ/0069/02/23 գործով 02.02.2024 թ. որոշման մեջ դատարանը նշել է. «Օրենքով սահմանված կարգով հայց հարուցելու հիմքով վաղեմության ժամկետը ընդհատվելու հարցին անդրադառնալիս Դատարանը անհրաժեշտ է համարում նաև պարզաբանել այն հարցը, թե արդյո՞ք հայցի առարկան լրացնելու կամ փոփոխելու դեպքում սկզբնական հայցի հարուցման արդյունքում առաջացած քննարկման առարկա իրավական հետևանքները վերագրելի են կատարված լրացմանը կամ փոփոխությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասից հետևում է, որ մինչև Դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը հայցվորը իրավունք ունի փոխել հայցի հիմքն ու առարկան, եթե այդ գործողությունը չի հանգեցնում հայցի էության փոփոխության: Հայցի էության փոփոխություն կարող է արձանագրվել այն դեպքում, երբ փոփոխվի պաշտպանության առարկա այն իրավունքը, որի խախտման կապակցությամբ հայցվորը դիմել է դատարան: Հայցային վա-

դեմությունը խախտված իրավունքի պաշտպանության հայցով դատարան դիմելու համար սահմանված ժամկետն է: Եթե անձը օրենքով սահմանված ժամկետում դիմում է դատարան, ապա հայցային վաղեմության ժամկետը պետք է ընդհատվի անկախ հայցվորի կողմից ընտրված պաշտպանության եղանակից: Էականը այն է, որ իր խախտված իրավունքի պաշտպանության համար անձը օրենքով սահմանված ժամկետում դիմել է դատարան: Արդեն այն հանգամանքը, թե ինչպիսի եղանակով է անձը փորձում պաշտպանել իր իրավունքը, հայցային վաղեմության ժամկետի ընդհատված լինելու համար էական նշանակություն չունի: Եթե օրենքով սահմանված կարգով հայց է հարուցվել, որն այդ դեպքում արձանագրված է, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի ուժով հայցային վաղեմության ժամկետը այդ պահից համարվում է ընդհատված:

Փաստորեն, հայցի առարկայի և հիմքի փոփոխության վերաբերյալ միջնորդության ներկայացումը չի գնահատվում որպես նոր հայցի ներկայացում, քանի որ այն շահը, որի պաշտպանության համար հարուցվել է սկզբնական հայցը, չի փոխվել:

Նման իրավակիրառական պրակտիկան հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմությանը վերաբերող կարգավորումներին: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով, ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողությունները կատարելով»: Այսպես, հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, երբ համապատասխան հայցը հարուցվում է սահմանված կարգով, այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով²:

Հարկ է նշել, որ տեսական գրականության մեջ առանձնացնում են հայցի իրավունքը դատավարական և նյութական իմաստներով³: Նյութական իմաստով հայցի իրավունքը սեփական հայցային պահանջների բավարարում ստանալու իրավունքն է⁴:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով 04.10.2013 թ. կայացրած որոշմամբ նշել է, որ հայցի առարկան այն նյութաիրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի վերաբերյալ դատարանը որոշում է կայացնում, հայցի փաստական

² Տե՛ս **Գաբուզյան, Զ.Ա.** Հայցային վաղեմության քաղաքացիաիրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում, իրավաբանական գիտությունների թեկնածուի հայցմանատենախոսություն, Եր., 2023, էջ 99:

³ Տե՛ս **Гурвич, М.А.** Право на иск, М.- Л., 1949, էջ 45:

⁴ Տե՛ս Гражданское процессуальное право: учебник: [в 2 т.] / под ред. П. В. Крашенинникова. – 2-е изд., перераб. и доп. М. : Статут, 2022, էջ 245:

հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Հայցն անհատականացվում է իր այս երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շնորհիվ: Հենց հայցի հիմքով ու առարկայով են որոշվում հայցերի նույնությունն ու տարբերությունը միևնույն սուբյեկտային կազմի դեպքում: ՀՀ օրենսդրությունն ընձեռում է հայցի հիմքն ու առարկան փոփոխելու հնարավորությունը, ընդ որում, հայցի առարկայի փոփոխությունը ենթադրում է հայցվորի՝ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի փոփոխություն, իսկ հայցի հիմքի փոփոխությունն այն հանգամանքների փոփոխությունն է, որոնց վրա հիմնվում է այդ նյութաիրավական պահանջը:

Այսինքն՝ հայցը փոխվում է, երբ փոխվում է նյութաիրավական պահանջը, ոչ թե այն դեպքում, երբ փոխվում է օրենքով պահպանվող շահը:

Այս հարցը պետք է դիտարկել նաև ՀՀ Սահմանադրության տեսակետից: ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատական քննության իրավունքի բաղադրատարրը համարվող իրավական որոշակիության սկզբունքը խախտում է պատասխանողի՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը և 59-րդ հոդվածով երաշխավորված՝ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

Իրավական որոշակիության սկզբունքը օրենքի գերակայության հիմնարար բաղադրիչներից է (տե՛ս Beian v. Romania (no. 1), § 39; Lupeni Greek Catholic Parish and Others v. Romania [GC], § 116):

Համապատասխան օրենքը պետք է ձևակերպված լինի բավարար ճշգրտությամբ, որպեսզի քաղաքացիներին հնարավորություն ընձեռի կարգավորելու իրենց վարքագիծը՝ տվյալ հանգամանքներում ողջամիտ չափով կանխատեսելով այն հետևանքները, որոնց կարող է հանգեցնել տվյալ արարքը (տե՛ս Centro Europa 7 S.r.l. և Di Stefano v. Italy [GC], § 141):

Մարկուսն ընդդեմ Լատվիայի գործով ՄԻԵԴ-ը եզրակացրել է, որ եթե կարգավորումները անորոշություն են թողնում առաջին ատյանի դատարանի իրավասության վերաբերյալ, այն չի կարող կանխատեսելի համարվել և կամայականությունից պաշտպանություն չի ապահովում: Դա կարող է նաև լրջորեն խոչընդոտել իր գործը դատարանում արդյունավետ ներկայացնելու անձի կարողությունը (տե՛ս Markus v. Latvia, no. 17483/10, 11 June 2020, § 73):

ՀՀ սահմանադրական դատարանը ՄԴՈ-630 որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ *«տվյալ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա*

հետ համատեղելու իր վարքագիծը» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման 11-րդ կետը):

ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-1270 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են **իրավական որոշակիության սկզբունքը**, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի **օրենքներով, որոնք համապատասխանում են ռազկական որոշակի հատկանիշների**՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի»:

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՍԴՈ-630, ՍԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսելու իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թ. մայիսի 3-ի ՍԴՈ-1270 որոշման 7-րդ կետը):

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «**նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝** ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների ընդունման հիմնավորման մեջ (այսուհետ՝ Հիմնավորում) արձանագրված է հետևյալը. «Քրեական գործընթացներից անկախ՝ ներկայումս պետությանը պատճառված վնասը կարող է վերականգնվել քաղաքացիական դատավարության կարգով պետական շահերի պաշտպանության հայցի հարուցմամբ: Վնասի հատուցման հայցը հարուցվում է ընդհանուր հայցային վաղեմության կիրառմամբ, որի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ

անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին⁵: (...) այն անձինք, ովքեր այդ գույքի նկատմամբ ունեն օրինական պահանջ, կարող են այն ներկայացնել իրավասու դատարան և միակ ժամկետը, որը կսահմանափակի նման պահանջի ներկայացումը, հայցային վաղեմությունն է: **Այս սկզբունքը պահպանվել է օրենքի նախագծման շրջանակներում և հետևաբար չի վատթարացնում այն անձանց իրավական վիճակը**, որոնք ապօրինի ճանապարհով ձեռք են բերել և պահպանում են կամ օտարել են որոշակի գույք: Այդպիսի գույքի նկատմամբ **հայցային վաղեմության պահպանմամբ**, մինչև օրենքի ընդունումը, այնպես էլ օրենքի ընդունումից հետո, կարող են պահանջներ ներկայացնել գույքի իրավատերերը կամ ՀՀ դատախազությունը՝ պետության շահերի պաշտպանության լիազորության իրականացման շրջանակներում⁶:

Ասվածից հետևում է, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում հարուցված հայցի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետները կիրառվում են կամ պետք է կիրառվեն նույն կերպ, ինչ մինչև օրենքի ընդունումը և դրանից հետո պետական շահերի պաշտպանության հայց հարուցելիս: Այլ կերպ՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում հարուցված հայցի քննության ընթացքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ, 170-րդ և 340-րդ հոդվածներին չի կարող տրվել այլ քաղաքացիական մնացած գործերով տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանություն:

Հակակոռուպցիոն դատարանը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում հարուցված հայցի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետները կիրառելիս պետք է մեկնաբանի այնպես, ինչպես մեկնաբանել և շարունակում է մեկնաբանել քաղաքացիական այլ իրավունքների պաշտպանության նպատակով հարուցված հայցերի պարագայում: Ավելին, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի և դրա հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ, 170-րդ և 340-րդ հոդվածների մեկնաբանությունը չպետք է վատթարացնի պատասխանողի իրավական վիճակը:

Մինչդեռ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ, 170-րդ և 340-րդ հոդվածներին տրված մեկնաբանությունը.

3. Չի համապատասխանում «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքն ընդունող մարմնի նպատակին:

4. Հայցվորին օժտում է ցանկացած ժամանակ նախկինում ներկայացված հայցի հիմքն ու առարկան ամբողջությամբ փոխարինելու, բռնագանձման ենթակա գումարի չափը առանց որևէ սահմանափակման ավելացնելու, նոր պա-

⁵ Տե՛ս Հիմնավորման 10-րդ կետը:

⁶ Հիմնավորման 63-րդ և 64-րդ կետերը:

հանջներ ներկայացնելու, հայցի հիմքն ամբողջությամբ փոխելու, նոր պատասխանող ներգրավելու, վարույթի ամբողջ սուբյեկտային կազմը փոխելու անսահմանափակ հայեցողությամբ: Մինչդեռ քաղաքացիաիրավական այլ վեճերում, այդ թվում՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայցի քննության ընթացքում հայցվորը նման լիազորությամբ օժտված չէ:

5. Իմաստագրվում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ուսումնասիրությունն ընդհանրապես, քանի որ դատարանների կողմից տրված մեկնաբանության պարագայում ուսումնասիրության արդյունքում հարուցված մեկ ՀՀ դրամի հայցապահանջ ներկայացնելուց հետո հայցվորը կարող է ներկայացնել նոր հայց՝ պահանջելով մեկ միլիարդ ՀՀ դրամ:

6. Իմաստագրվում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրության արդյունքով նախատեսված ուսումնասիրության ժամկետը, քանի որ Հակակոռուպցիոն դատարանի կողմից տրված մեկնաբանության պարագայում ուսումնասիրության ժամկետը ավարտելուց հետո մեկ ՀՀ դրամի հայցապահանջ ներկայացնելով հայցվորը կարող է առանց որևէ ժամանակային սահմանափակման շարունակել ուսումնասիրությունը և ներկայացնել նոր հայց՝ պահանջելով 1 միլիարդ ՀՀ դրամ:

7. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ, 170-րդ և 340-րդ հոդվածներին դատարանների կողմից տրված մեկնաբանության դեպքում նման վարույթների շրջանակում բացառվում է հայցային վաղեմության ժամկետների կիրառումը, և այդ ինստիտուտը դադարում է գոյություն ունենալուց, քանի որ ի սկզբանե հայցը հարուցվում է հոգուտ պետության՝ ենթադրյալ ապօրինի գույքի բռնագանձման նպատակով, և անկախ նրանից՝ նոր հայցադիմում է ներկայացվում, թե փոխվում է հայցի հիմքը կամ առարկան՝ հայցը հարուցվում է պետական շահի պաշտպանության նպատակով:

8. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցի հարուցումը ընդգրկվում է դատախազի կողմից պետական շահերի, այդ թվում՝ պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետության կողմից համայնքին ուղղված ֆինանսական միջոցների պաշտպանության հայցի շրջանակներում: Հետևաբար, դատարանների կողմից տրված մեկնաբանությունը պետք է կիրառելի լինի ոչ միայն «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցի հարուցման, այն նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերում նախատեսված՝ պետական շահի պաշտպանության հայց հարուցելու մնացած դեպքերում ևս:

9. Իմաստագրկվում են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետները, քանի որ ուսումնասիրության համար սահմանված ժամկետի վերջին օրը մեկ ՀՀ դրամի հայցապահանջ ներկայացնելուց հետո Հայցվորը հնարավորություն է ստանում շարունակելու ուսումնասիրությունը՝ հաստատապես իմանալով, որ ցանկացած ժամանակ կարող է ներկայացնել նոր հայց, որը դատարանների կողմից կգնահատվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ, 170-րդ և 340-րդ հոդվածների հիման վրա հայցի առարկայի կամ հիմքի փոփոխություն, քանի որ «**հայցադիմումով պաշտպանվող շահը**», ըստ դատարանների, մնացել է նույնը:

10. Արդյունքում, դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ, 170-րդ և 340-րդ հոդվածներին տրված այդ մեկնաբանությունը վատթարացնում է պատասխանողների իրավական վիճակը:

11. Հակակոռուպցիոն դատարանի կողմից «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ, 170-րդ և 340-րդ հոդվածներին տրված նման մեկնաբանության պարագայում հայցվորի վարքագիծը դառնում է անկանխատեսելի, պատասխանողները գրկվում են իրենց հետագա գործողությունները պլանավորելու և, հետևաբար, իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն արդյունավետ կերպով իրականացնելու հնարավորությունից:

12. Պատասխանողները գրկվում են հայցի առարկայի մեջ չներառված՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու հնարավորությունից, քանի որ ապահովագրված չեն և չեն կարող համոզված լինել, որ ինչ-որ ժամանակ հետո հայցվորի կողմից չի ներկայացվի նոր գույքային պահանջ նաև սեփականության այդ միավորի դեմ, և տվյալ գույքը օտարված լինելու դեպքում պահանջի իրավունքը կտարածվի պատասխանողներին պատկանող այլ գույքի կամ գույքերի վրա:

Հետևաբար, ձևավորված իրավակիրառ պրակտիկան հակասում է հայցային վաղեմության ինստիտուտի էությանը, բացառում է որևէ քաղաքացիաիրավական հարաբերության պարագայում հայցային վաղեմության ինստիտուտի կիրառումը, անտեսում է ՀՀ վճռաբեկ դատարանի այն բոլոր իրավական դիրքորոշումները, որոնք սահմանում են հայցի առարկան և հիմքի փոփոխությունը նոր հայց ներկայացնելուց տարբերակող չափանիշները:

Դատարաններն իրենց այս մոտեցումը հիմնավորում են նաև ՀՀ քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքի երաշխավորման անհրաժեշտությամբ: Քաղաքացիական դատավարությունում, սակայն, տնօրինչական իրավունքների իրականացման հնարավորություններից օգտվելը չի նշանակում, որ դրանից օգտվող սուբյեկտը չպետք է կրի նաև դրա ի-

րավական հետևանքները: Օրինակ՝ նույն տնօրինչական իրավունքների իրականացման շրջանակներում հայցից լրիվ կամ մասնակիորեն հրաժարվելու դեպքում հայցվորը հրաժարվում է հարուցված հայցի (կամ դրա մի մասի) քննության և լուծման հետ կապված բոլոր դատավարական իրավունքներից, այդ թվում նաև գործով վեճն ըստ էության լուծող վճռի կայացում պահանջելու իրավունքից: Նույն կերպ՝ սկզբնականից տարբերվող նոր հայց ներկայացնելու դեպքում հայցվորը պետք է կրի հայցային վաղեմության ժամկետի կիրառման հետևանքները:

Սահմանադրական դատարանը, ՄԴՈ-1611 որոշմամբ անդրադառնալով հայցային վաղեմության ինստիտուտի իրավական նշանակությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«(...) հայցային վաղեմության ինստիտուտն ինքնին ուղղված է քաղաքացիական շրջանառության մեջ սեփականության, տնտեսական գործունեության մեջ զբաղվելու, արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքներին և մյուս սահմանադրական արժեքներին առնչվող քննարկված նպատակների երաշխավորմանն ու դրա միջոցով քաղաքացիական շրջանառության կայունության, իրավահարաբերությունների որոշակիության, դրանց մասնակիցների բարեխղճության, իրավունքների պաշտպանության գործիքակազմերի բարեխիղճ օգտագործման, արդյունքում նաև՝ իրավահարաբերությունների ոչ թե մեկ, այլ բոլոր սուբյեկտների հիմնարար իրավունքների պաշտպանության ապահովմանը: Նշված նպատակները բացառիկ կարևորություն ունեն իրավական պետության կայացման տեսանկյունից և պետք է ընկած լինեն հայցային վաղեմությանն առնչվող ցանկացած իրավակարգավորման և իրավակիրառական պրակտիկայի հիմքում: Այդ հանգամանքը ստացել է ոչ միայն դոկտրինալ ձևակերպում, այլ արձանագրվել է նաև այլ երկրների արդարադատական պրակտիկայում:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքին առնչվող դիրքորոշումներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ վաղեմության ժամկետները «ծառայում են մի քանի կարևոր նպատակների, որոնցից են՝ իրավական որոշակիության և վերջնականության ապահովումը, հնարավոր պատասխանողներին հնացած և հետևաբար դժվարությամբ վիճարկելի պահանջներից պաշտպանությունը, անարդար որոշումների նախականիսումն այն դեպքերում, երբ դատարանից պահանջվի լուծել պահանջը վաղ անցյալում տեղի ունեցած փաստերի հաստատման միջոցով և այնպիսի ապացույցներով, որոնք զգալի ժամանակ անցնելու պատճառով այլևս անարժանահավատ կամ ոչ ամբողջական են դարձել» (Մթաբինգսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 22083/93 և 22095/93 դիմումներ, կետ 51, 1996 թվականի հոկտեմբերի 22-ի վճիռ, ինչպես

նաև Կոեմեն և այլք ընդդեմ Բելգիայի, թիվ 32492/96 և 4 այլ դիմումներ, 146 կետ, 2000 թվականի հունիսի 22-ի վճիռ):

Այսպիսով, հայցային վաղեմության ինստիտուտի նպատակն է կանոնակարգել քաղաքացիական շրջանառությունը, ստեղծել իրավական կապերի որոշակիություն ու կայունություն, ապահովել իրավահարաբերության մասնակիցների կարգապահությունը, նպաստել պայմանագրերի կատարմանը, ապահովել քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտների իրավունքների և շահերի ժամանակին պաշտպանությունը: Խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար ողջամիտ ժամանակային սահմանափակումների բացակայությունը կհանգեցնեք պատասխանողների և երրորդ անձանց իրավունքների ու շահերի խախտման, (...)» (ՀՀ սահմանադրական դատարանի 2021թ. սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-1611 որոշման 6-րդ բաժին):

Անդրադառնալով նույն հարցին՝ ՄԻԵԴ-ը **Bogdel v. Lithuania** գործով՝ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը ներառում է «դատարան դիմելու իրավունքը», որի բաղկացուցիչն է հասանելիության իրավունքը, այսինքն՝ քաղաքացիական գործերով դատարանում վարույթ հարուցելու իրավունքը: Այնուամենայնիվ, այս իրավունքը բացարձակ չէ, բայց կարող է ենթարկվել սահմանափակումների, դրանք ենթադրաբար թույլատրվում են, քանի որ հասանելիության իրավունքն իր բնույթով պահանջում է կարգավորում պետության կողմից: Հատկանշական է նաև, որ վաղեմության ժամկետները անդամ պետությունների ներպետական իրավական համակարգերի ընդհանուր հատկանիշն են: Դրանք ծառայում են մի քանի կարևոր նպատակների, մասնավորապես՝ ապահովել իրավական որոշակիություն և վերջնականություն, պաշտպանել պոտենցիալ պաշտպանության կողմին հնացած պահանջներից, որոնց կարող է դժվար լինել հակազդել, և կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի որոշում կայացնել հեռավոր անցյալում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ՝ այն ապացույցների հիմքով, որոնք կարող են անվստահելի և թերի դառնալ ժամանակի ընթացքում» (Mutatis Mutandis, Stubbings and Others v. the United Kingdom, 22 October 1996, §§ 50 and 51, Reports of Judgments and Decisions 1996-IV):

Դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ, 170-րդ և 340-րդ հոդվածներին տրված մեկնաբանությունը բացառում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա հարուցված հայցերով վաղեմության ժամկետների կիրառման հնարավորությունը:

⁷ St' u BOGDEL v. LITHUANIA, Application no. 41248/06, 26 November 2013, para. 79:

Մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-1119 գործով կայացված որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ «Սահմանադրության 18-րդ հոդվածը յուրաքանչյուրին տալիս է, մասնավորապես, պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, որին ուղղակիորեն համապատասխանում է պետության պարտականությունն ինչպես օրենսդրական մակարդակում ամրագրել, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայում ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների առկայությունը: Այսինքն օրենսդրական մակարդակում չպետք է սահմանվեն այնպիսի իրավական կառուցակարգեր, որոնք առաջին հայացքից հանդես են գալիս որպես երաշխիքներ տվյալ իրավական կառուցակարգի իրացման համար, սակայն կարգավորումների մանրամասներում փաստացիորեն իմաստագրվում են կամ սահմանափակում այդ իրավական կառուցակարգերը» (ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-1119 որոշման 5-րդ կետ):

Կատարված վերլուծությունից եզրակացնում ենք, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 8-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ, 170-րդ և 340-րդ հոդվածներին ապօրինի գույքի բռնագանձման վարույթների շրջանակներում դատարանների կողմից տրվող մեկնաբանությունը Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խոցելի է և ենթակա է վերանայման:

ДАВИТ МЕЛКОНЯН, АРСЕН ТАВАДЯН – Судебная практика применения сроков исковой давности в производстве по делам о конфискации незаконно приобретенного имущества. – В статье рассматривается судебная практика применения срока исковой давности в производствах по делам о конфискации имущества незаконного происхождения. Для Генеральной прокуратуры Республики Армения стало обычной практикой подавать иски в установленный законом трехлетний срок, а затем направлять в суд ходатайства об изменении предмета и основания иска. Примечательно, что такие ходатайства часто подаются после начала расследования и по истечении трехлетнего срока исковой давности. Тем не менее, суды последовательно отклоняют ходатайства ответчиков о применении срока исковой давности, ссылаясь на соответствующие положения Гражданского процессуального кодекса РА.

Авторы утверждают, что такое толкование срока исковой давности противоречит конкретным правовым положениям, изложенным в Законе РА «О конфискации имущества незаконного происхождения». Кроме того, толкование статьи 8 Закона РА «О конфискации имущества незаконного происхождения», а также статей 12, 170 и 340 Гражданского процессуального кодекса РА вызывает опасения относительно их соответствия конституционным принципам и заслуживает тщательного изучения.

Ключевые слова: Исковая давность, изменение основания и предмета иска, имущество

DAVIT MELKONYAN, ARSEN TAVADYAN – Judicial Practice in Applying Statutes of Limitations in Confiscation Proceedings for Illegally Acquired Property.– This article examines the judicial practice of applying the statute of limitations in proceedings concerning the confiscation of property of illegal origin. It has become a common practice for the Prosecutor General's Office of the Republic of Armenia to file lawsuits within the three-year period

established by law and subsequently submit petitions to the court seeking to amend the subject and basis of the lawsuit. Notably, such petitions are often filed after the investigation has commenced and beyond the three-year limitation period. Nevertheless, courts consistently reject defendants' petitions to apply the statute of limitations, citing relevant provisions of the RA Civil Procedure Code.

The authors argue that this interpretation of the statute of limitations contradicts specific legal provisions outlined in the RA Law *"On the Confiscation of Property of Illegal Origin"*. Furthermore, the interpretation of Article 8 of the RA Law *"On the Confiscation of Property of Illegal Origin"*, as well as Articles 12, 170, and 340 of the RA Civil Procedure Code, raises concerns regarding their compliance with constitutional principles and merits a thorough review.

Key words: *Statute of limitations, change of basis and subject of claim, property of illegal origin, Code of Civil Procedure*

Գրականության ցանկ

Գաբուզյան, Բ.Ա. Հայցային վաղեմության քաղաքացիաիրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում, իրավաբանական գիտությունների թեկնածուի հայցման ատենախոսություն: Եր., 2023 (Gabuzyan, K.A. Haytsayin vaghemutyany kaghakatsiayiravakan kargavorumy Hayastani Hanrapetutyunum, iravabanakan gitutyunneri teknatsui haytsman atenakhosutyun. Yer. 2023):

Гурвич, М.А. Право на иск. М.; Л., 1949, 216 էջ (Gurvich M.A., Pravo na isk. M.; L., 1949, 216 ej).

Гражданское процессуальное право : учебник : [в 2 т.] / под ред. П. В. Крашенинникова. – 2-е изд., перераб. и доп. – Москва: Статут, 2022, 550 էջ (Grazhdanskoe protsessualnoe pravo: uchebnik: [v 2 t.] / pod red. P.V. Krashenninnikova. – 2-e izd., pererab. i dop. – Moskva: Statut, 2022, 550 ej).